Անկախության օրվա ուղերձ

Ցանցային Պետության հարգելի քաղաքացիներ և հետևորդներ, Համաշխարհային Հայության հարգարժան ներկայացուցիչներ,

32 տարի առաջ՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին, հայոց ազգը անկախության հանրաքվեով արձանագրեց Հայքի մի փոքր հողակտորի վրա մեր պետականության և սուբյեկտայնության վերածնունդը՝ հիրավի դնելով Հայկական հարցի հայանպաստ լուծման ճանապարհի հիմքը եւ բոցավառելով աշխարհով մեկ սփռված Համաշխարհային Հայության հոգիները:

Բացառությամբ Արցախյան ազատամարտի, ցավոք, այս 32 տարիների ընթացքում հայաստանյան իշխանությունների և համահայկական ընտրանու կողմից թույլ տրված կոպտագույն սխալների և հսկայական հնարավորությունների մսխումների պատճառով Հայկական հարցի լուծման ուղղությամբ նշանակալի հաջողություններ չկարողացանք ունենալ: Իսկ այսօր դառը կսկիծով ենք դիմավորում պետականության վերածնունդը՝ մեր հայրենիքում՝ Արցախում իրականացվող ցեղասպանության եւ հայրենիքի կորստյան վտանգի պայմաններում: Արցախում վտանգված է հազարամյակներով այնտեղ ապրած և արարած հայի ֆիզիկական գոյությունը, ինչը ոչ միայն համահայկական, այլև համաշխարհային աղետ է: Հայքի հերթական հատվածի՝ Արցախի կորուստը նորաստեղծ Ցանցային Պետության, ինչպես նաև Համաշխարհային Հայության բոլոր ներկայացուցիչներիս ամբողջական ձախողումն է:

Այսօր, քան երբևէ, պարտավոր ենք լինել միասնական, մեկ բռունցք, լծվել տոկուն և հարատև հայկական համակարգ ստեղծելու և ընդլայնելու սուրբ գործին: Համաշխարհային Հայության հոգևոր, մտավոր և նյութական միջոցների ճիշտ տեղաբաշխումն ու օգտագործումը ժամանակի հրամայականն է: Ցանցային Պետությունը էլ ավելի մեծ թափով այժմ լծվում է հայկական սուբյեկտի կայացման և բարձրացման սուրբ գործին՝ ակնկալելով Համաշխարհային Հայության միլիոնավոր ներկայացուցիչների եռանդուն և գործնական ներգրավվածությունը:

Համաշխարհային Հայության սուրբ պարտականությունն է մեր մեջ կրել, պահպանել և զարգացնել հայկական քաղաքակրթության հսկայական ժառանգությունը՝ որպես հայկական համակարգի տոկունության գրավական: Հայոց ազգը հարատևելու է իր պատմական կենսագործունեության տարածքում:

Բոլորիս կամք, տոկունություն, հետևողականություն և պատասխանատվություն:

Վահրամ Այվազյան
Ցանցային Պետության հիմնադիր և խորհրդի նախագահ